

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ներկայում 1887 թիւն

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌՈՒՄՈՒՄՆԵՐԻՆ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
ջև, Թաւմաշեի տանիք):
Կայսերական Ռուս քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի շինութիւնը.—
Ներսիսեան ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռազմադրոշմական պատրաստութիւն-
ներ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—
ԽԱՆԻ ԼՈՐԵՐ.—ՀԵՌՈՒՄՈՒՄՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի զատարար-
ական ուղղութիւն.

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐՈՑԻ ՇԵՆՈՒ- ԹԻՒՆԸ

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի դեռ ևս
նախկին հոգաբարձութեան օրով յարուց-
վեցաւ դպրոցի համար նոր շինութիւն
կառուցանելու միտքը, քանի որ դպրոցի
այժմեան շինութիւնը վերին աստիճանի
անյարմար է: Եւ այն ժամանակ, որքան
յիշում ենք, մի տաս տարի սրանից առաջ
արդէն շինվեցաւ նոր շինութեան յատա-
կագիծը, վանքի մայր-եկեղեցու դիմաց
գտնվող վանքապատկան հողի վրա դպրո-
ցական նոր շինութիւն կառուցանելու դի-
տաւորութեամբ:

Բայց մինչև այժմ այդ դիտաւորութիւ-
նը իրագործված չէ, նախ որովհետև դրա-
րոցի հոգաբարձութիւնը մինչև այժմ հը-

նար չէր գտաւ շինութեան համար հարկա-
ւոր գումարը ձեռք բերելու, և երկրորդ,
յիշեալ վանքապատկան հողի մի քանի
կտորները վրա իրաւունքը կորցրած լինե-
լով... Այդ հողի վրա շինված մի քանի
աների տները տաս տարուց աւելի վնա-
ւած չէր լինելով հողերը իշխանութեանը
իրանց կապաւորումը, օգուտ քաղելով հո-
գաբարձութեան այդ անհոգութիւնից,
այժմ կատարելապէս անհիշ են դառնում
այդ կտորների վրա: Այսպիսով Ներսիսեան
դպրոցի հոգաբարձութիւնը վանքապատ-
կան դեռնի ամբողջութիւնը վերականգնե-
ցնելու համար, և անկարող լինելով այլ ևս
գտաւ բանալ սեփականատէրեր դարձած
կապաւորուների դէմ, ստիպված էր լինի
մի յայտնի գումար ծախսել այդ գետնի
օտարացած կտորները նորից յետ գնելու
համար:

Բայց մի և նոյն ժամանակ դպրոցի հո-
գաբարձութիւնը կատարելապէս համոզվե-
լով այն շինութեան անպիտանութեան մէջ,
որտեղ գետեղված է այժմ դպրոցը, մինչև
նոր շինութիւն կառուցանելը, որոնում էր
քաղաքի մէջ մի այլ տուն, որ աւելի յար-
մար լինէր դպրոցի համար: Եւ ահա մի
ամիս սրանից առաջ առաջարկվեցաւ հո-
գաբարձութեանը գնել քաղաքի Չուղուրէթ
աւանի թաղում գտնված հըր-Վրդանցի
հասցին տունը, որի մէջ գետեղվում է

այժմ ինտենդանտութիւնը: Հոգաբարձու-
թիւնը այդ առաջարկութեան հիման վրա
նշանակեց իր միջից էկսպերտներ յիշեալ
շինութիւնը նայելու համար:

Մենք չէր գիտենք թէ տերը որքանով է
գնահատում իր շինութիւնը, մենք լսել
ենք որ 150, կամ 180 հազար ռուբլի,
բայց հարցը դրանում չէ: Այդտեղ զարթ-
նում է մի այլ խնդիր, նախ յարմար է
արդեօք քաղաքի մի ծայրում և ոչ թէ
կենտրոնում գտնված շինութիւնը հայոց
թեմական դպրանոց լինելու համար, քանի
որ Թիֆլիսի հայոց ազգաբնակչութիւնը
զրկաւորապէս քաղաքի կենտրոնում է
բնակվում, ուրեմն դպրոցի երթևեկ աշա-
կանների մեծ մասը համար, մանաւանդ
հետա ժամանակ անտանելի էր լինի քաղա-
քի կենտրոնական թաղերից ամեն օր այ-
ցելել դպրոցը:

Երկրորդ խնդիրն այն է, որ հըր-Վրդա-
նցի տունը թէև շատ մեծ է ընդար-
ձակ է, նոյն իսկ շէնք շինութիւն է,
բայց դրա հետ միասին անյարմար է մի
դպրոցի բնակարանին ծառայելու համար:
Մի կողմից տունը ունի մարմարեայ սան-
դուխներ, փառաւոր և շքեղ դռներ ու
ստանդներ,—իսկ միւս կողմից սենյակների
առաստաղները ցած են, ոչ մի հատ մեծ
դահլիճ չէր կայ ամբողջ շինութեան մէջ,
կորիդորները (անցքերը) նեղ են և այլն:
Շինութիւնը իրաւ շատ գեղեցիկ է, բայց
ոչ թէ դպրոցի համար:

Այդ է պատճառը որ, մեր կարծիքով, Ներ-
սիսեան դպրոցի հոգաբարձութիւնը պէտք է
մտածէր վերջապէս իր սեփական շինու-
թիւնը կառուցանելու քան թէ աւելնու-
այն էլ թանկ գնով, արդէն մի պարտաւոր
շինութիւն, որ անյարմար լինելով դպրոցի
համար, հոգաբարձութիւնը ստիպված էր
լինի կրկնակի գումար ծախսել այդ տեսակ
շինութիւնը վերանորոգելու և դպրոցական
պէտքերին նրան յարմարեցնելու համար:
Հոգաբարձութեանը գրեթէ նոյնքան,
գուցէ և աւելի քիչ էր նստել իր սեփա-
կան տունը շինելու վանքապատկան գետնի
վրա, եթէ մինչև անգամ հաշուենք այն
ծախսերը, որ նա պիտի անի յիշեալ գետնի
մի քանի օտարացած կտորները յետ գնե-
լու համար:

Մենք չէր գիտենք ինչ դիտաւորութիւն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԴԱՍԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՐՂՂՈՒԹԻՒՆ

III.

Որքան տղէտ և անզարգացած է մի հասարա-
կութիւն, այնքան էլ սխալ են լինում կենքի
մասին նրա հասկացողութիւնները, այնքան էլ
չնչին և ծիծաղելի են լինում նրա լոգեանքը և
այն զարգացումը, որ նա ունենում է, առհաս-
րակ, մարդկային դաստիարակութեան և նրա նը-
պատակի մասին: Ռուսոսի ժամանակ ֆրանսիա-
կան հասարակութիւնը այնքան տղէտ էր, որ նը-
րա լոգեանքը մօղայից և սալոնական կենքից
հեռու չէին կարողանում դնալ: Եւ այն ժամա-
նակվայ դաստիարակութիւնն էլ ստացել էր նոյն-
պիսի թիւր և անբնական ուղղութիւն: Նա ոչ
թէ զարգացնում և կատարելագործում էր մար-
դու մէջ նրա բնական ոյժերը և ընդունակու-
թիւնները, այլ վաղորօք փչացնում, յեղաշրջում
էր նրա թէ ֆիզիկական և թէ հոգեկան բոլոր
ձիւղերը: Նա սովորեցնում էր մարդուն ոչ թէ լի-
նել, այլ երեսել և արտաքին ձևականութեանը
մէջ թաղված՝ ամեն բանում կեղծել, թէ իր
խղճի և թէ, հասարակութեան առաջ: Եւ ահա
Ռուսոսն, որ շատ լաւ հասկացել էր իր ժամա-
նակի ողին, դուրս եկաւ հրապարակ և սկսեց
բողբոյլ իր հայրենակիցները փչացած, անբարո-
յական վարք ու բարքի դէմ: Նա մեծ եռանդով

ապացուցանում էր նրանց սխալը և մարդու-
թիւնները, նրանց արուեստական կենքի դու-
տարկութիւնը, բարք ու վարքի ընդհանուր ան-
կումը: Նա առաջարկում էր իր հայրենակիցնե-
րին թողնել կենքի չնչին ու վնասակար վայելե-
քները և, կաղաւթվելով թէ ֆիզիկական և թէ
հոգեպէս, առաջ դնալ դէպի նոր կենքը, նոր
բարոյական վերածնութիւն: Եւ այդ նպատակին
հասնելու համար Ռուսոսն առաջարկում էր մի
շատ խելացի և արմատական միջոց—իր դաստի-
արակութեան սկզբունքը, որ մեծ տաղանդով ու
հասկացողութեամբ նա մշակեց և պարզ օրինակ-
ներով բացատրում էր ամենին: Թէ
որքան միտք և կենտրոնական ճշմարտութիւն կար
այդ նրա քարոզած դաստիարակական սկզբունքի
մէջ, երևում է նրանից, որ մինչև այժմ էլ նա
համարվում է զլխաւոր հիմք, որի վրա կայանում
են արդի մանկավարժական բոլոր մեթոդները:
Ռուսոսն ասում էր. դաստիարակութիւնը պէտք
է հիմնված լինի ժողովուրդի մտաւոր և թէ ֆի-
զիկական աշխարհի խիստ ուսումնասիրութեան և
կենքի մասին խելացի, բնական հասկացողու-
թիւն ունենալու վրա: Դաստիարակութիւնը մար-
դուն պատրաստում է հասարակութեան օգուտ-
ւէտ անդամ լինելու համար և այդ պատճառով,
նրա բոլոր ընդունակութիւնները պէտք է կարն-
ւոյն չափ դարձնան և հասնեն կատարելութեան
ամենաբարձր աստիճանին: Ֆիզիկական դաստիա-
րակութիւնը, այսինքն մարմնի ամրութիւնը կար-
ւում է դաստիարակութեան հիմքը, որովհետև
կեղծ քաղաքակրթութեան փչացած, չբարակ

ունի անելու տան հարցի վերաբերմամբ
Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը,
միայն լսել ենք, որ հոգաբարձութիւնը
յետաձգել է տան հարցի վճիռը մինչև
առաջիկայ սեպտեմբեր ամիսը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Այսօր Թիֆլիսում սպասվում է կովկասեան
կառավարչապետ իշխան Գոնչուկով-Կորսակով:

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են «Մայիսի 24-ից
մինչև յունիսի 7-ը տեղիս գիւղական հասարա-
կութեան մէջ ուղարկութեան արժանի քանի մի
ժողովներ եղան տանուտէրի կարգադրութեամբ:
Առաջին ժողովը զբաղվեցաւ տղայոց հոգեւոր-
խական ուսումնասիրանի նիւթական ապահովու-
թեան և օրիորդաց ուսումնասիրանի բացման խնդ-
րով և վերջապէս կիսատ մնացած աղբիւրը գիւ-
ղը հասցնելու հարցով: Ցանուտէրը առաջ
քան թէ ուսումնասիրանի պահպանութեան աղբիւ-
րները ցոյց տալու, քանի մի խօսք ասեց ուսում-
նասիրանի կարեւորութեան մասին: Ժողովը
յայտնեց իր պատրաստակամութիւնը՝ օգնելու
տանուտէրին գլուխ բերելու առաջարկած հարցե-
րը, և խոստացաւ այս տարի բոլորովին ապահո-
վացնել տղայոց ուսումնասիրանը: Երկրորդ և եր-
րորդ ժողովներում կարգադրութիւն եղաւ ու-
սումնասիրանը դռնէ դռն գցելուց ազատելու հա-
մար սեփական շինութիւն կառուցանել եկեղե-
ցու դաւթում, և դրա համար ծախսել 500 ռ.
ուսումնասիրանապատկան երկու հազար ռուբլի դը-
րամագլխից: Քար ու կիրք և շինութեան փայտը
ժողովուրդը պէտք է բերէ սպիւնով անվարձ:
Ժողովը հաստատ մնալով իր խօսքին, արդէն
կանգնացրել է ուսումնասիրանի պատերը ժողովրդի
աշխատաւոր ձեռները օգնութեամբ: Իսկ օրիոր-
դաց ուսումնասիրանի համար այսօր կարելի է
ասել, որ վնաս է այս տարի սեպտեմբերի 1-ից
բանալ: Սրա համար էլ եկող տարի պէտք է շի-
նութիւն կառուցվի միւս եկեղեցու գաւթում
Գալով երկուսն ուսումնասիրանների նիւթական ա-
պահովութեան, կարգադրվեցաւ կապալով տալ

մակերպել իր հոգու և մարմնի ոյժերը, գիւղական
կենքը, իր ընդարձակ և լայն բնաւորութեամբ,
մեծ յարմարութիւններ է ներկայացնում դաստի-
արակութեան համար: Գիւղում երեխան աւելի մօտ
է բնութեանը քան թէ քաղաքում, այնտեղ աւելի
հնչողութեամբ նա կարող է դիտել, ուսումնասի-
րել բնութիւնը, ոգևորվել նրա սքանչելի գեղեց-
կութիւններով, ենթարկվել նրա անմոխիտ ոյժե-
րի ազդեցութեանը, տեսնել, լսել և զգալ բնու-
թեան իրերը, երևոյթները, ոյժերը: Եւ, որ ամե-
նազլաւորն է, գիւղում երեխան աւելի ազատ է
զղում իրան, աւելի ինքնուրոյն, աւելի անկախ
քան թէ քաղաքում, գտնվելով ծնողների կամ
դաստիարակների շարունակ հսկողութեան ներ-
քոյ: Որդիաւոր ծնողները, շատ անդամ, իրանց
աւելորդ հոգացողութեամբ էական վնասներ են
տալիս երեխային. նրանք յաճախ արգելում են
անել այն, ինչ որ անհրաժեշտ հարկաւոր է նը-
րան անել, և, ծնողական բարեսիրտութեամբ, շատ
անգամ ստիպում են իրանց որդուն կատարել ա-
մենին վնասակար և անհասկանալի բաներ: Այս-
պիսով երեխան քիչ-քիչ սովորում է լսել աւելի
ուրիշներին, քան թէ իր սեփական, ներքին ձեռ-
տմանը հետևել, նա դառնում է աւելի ենթարկ-
վող կրաւորական արարած, քան թէ ինքնուրոյն,
ներդրական բնաւորութիւն: Եւ, բայց դրանից,
ուրիշները ազդեցութեան տակ կատարելով այս
ինչ, կամ այն ինչ բանը, երեխան չէ կարողա-
նում այնքան խորը թափանցել իր կատարա-
գործի մէջ, չէ կարողանում ոգևորվել, ստակա-
նութիւնը զղալ նորանուստ: Մանաւանդ, եթէ կա-

եկեղեցու մոմավաճառութիւնը, արօտատեղերի մի մասը, հասարակաց կլիւնը, զիւղամէջ վաճառվող նաւթը և մասվաճառութիւնը: Կարգադրվեցաւ և ջրի հարցը»:

Ստացանք պ. Ալ. Քալանթարից ուսուներէն լեզուով տպած նրա զեկուցումը «Կաթնամշակութեան դպրոցի հարցի» մասին Այդ զեկուցումը, որ արտատպւած է Գիւղատնտեսական ընկերութեան հրատարակութիւններէ, կարգադրվել է նոյն ընկերութեան 1886 թիւ հոկտեմբերի 7-ի նիստում, և հէնց այն ժամանակ «Մշակի» մէջ հաղորդվեցաւ զեկուցանողի արտայայտած օգտակար մտքերը զիւրաւոր իմաստը, մի այնպիսի ուշադրութեան արժանի խնդրի մասին, որպիսին է կաթնային տնտեսութիւնը՝ Անդրկովկասի համար:

Մեզ զբոսն են ԲԱԳՈՒԻՑ հետեւելը: «Յունիսի 22-ին Բալթիկայի նաւթահանքերում մինչև այժմ չը տեսնված հրդեհ պատահեց: Առաւօտեան ժամը 11-ին Բալթիկայի լուր ստացանք իրր թէ ամբողջ Բալթիկայը այրվում է: Լուրը ստանալուն պէս ուղևորվեցանք Բալթիկայի և ժամը մէկին հասանք այնտեղ: Սարսափելի էր տեսարանը: Մի 15 րոպէի մէջ կրակը տարածվել էր զրեթէ 300 սաժէն երկայնութեամբ և 150 կամ 200 սաժէն լայնութեամբ: Այս ինչից էր սուղացել կրակը. Նորէի 16-րդ գրուպայում մի ֆօնտան ծածկողով էր ծածկված և այդ պատճառով նրա մէջ հաւաքվել էին զազեր բաւական մեծ քանակութեամբ: Երբ սկսում են բաց անել ֆօնտանի բերանը, այդ ֆօնտանին կից գտնվող «Торное Товарищество» ընկերութեան կ օ ւ զ ար և կ ա յ ի կաթան վառած լինելով, անմիջապէս դաղը բռնվում է և ամեն բան չորս կողմ հետզհետէ սկսում է այրվել՝ նախ թափառները, կաթանները, մեքենաները, նասաները, բնակութեան սենեակները, խանութները, բանտրների բնակարանները և այլն: Այրված նաւթահանքից 3 հատ պատկանում են Նորէին, 3 «Торное Товарищ.» ընկերութեանը, 2 Տէր-Ալեքսանդրին, և 1 հատ Գառնուրեանին: Բայց այս վերջինի մօտ այրվել է և սենեակները, որոնց մէջ ընտելվելու են եղել ընկերութեան ծառայողները: Առում են որ մի քանի մշակներն էլ այրվել են: Այրվել է նոյն պէս Ժամհարանցի նաւթի ամբարը: Երեկոյան կրակը արդէն հանգչում էր»:

ՆՈՐ-ՆԱԻԺԵՆԻԱՆԻ արհեստաւորաց դպրոցի տեսուչը ընծայ է ուղարկել մեր խմբագրութեան մի քանի նմուշներ այդ դպրոցի աշակերտներին մի քանի նմուշներ: Այդ նմուշները մէջ կան փայտեայ (ճախարակազորական, товарищ.) երեք առարկաներ և մի պողպատեայ բաւական նուրբ:

տարած գործը իր ցանկութեան և ճաշակին հակառակ է: «Վարդը պէտք է լինի գործնական մարդ, ասում է Ռուսոսն, այլ ոչ թէ միակողմանի, մտաւոր զարգացման քիմիական արտադրութիւն: Այս պատճառով, դաստիարակութեան մէջ յարունակ պէտք է հետևել այն կանոնին, որ երեխան ինքը, իր բնական ուժերի օգնութեամբ կարողանայ ըմբռնել մի որ և է զաղափար, իր ցանկութեամբ և ներքին զորման չնորհիւ կատարէ այս կամ այն գործը: Երեխայից խելացի, գործնական մարդ պատրաստելու համար, անհրաժեշտ է, որ նրա դաստիարակութիւնը լինի խելացի, գործնական ուղղութեամբ: Այն ժամանակ երեխայի մէջ ցանկութիւն և ուժ կը լինի գործ կատարելու, երբ նա, իր փորը հասակից, ամեն ինչ գործով, օրինակներով, փորձով է ըմբռնում: Միակողմանի, լոկ զիւրի զարգացումը աւելի մարդուն թշուառացնում է, քան թէ օգուտ է տալիս նրան. նա սովորեցնում է մարդուն միշտ խորատուվել մտաւոր գործողութեանց մէջ, առանց կարողանալու որ և է գործ կատարել կենցաղում, շարունակ մտածել, երևակայել և յուսալ, առանց իրագործելու, կենդանութիւն տալու իր երեսակցած մտածմունքներին: Այդպիսի մարդիկ կարող են ունենալ շատ բարձր և ազնիւ ցանկութիւններ, շատ օգտակար և հասարակութեան շահ բերելու ձգտումներ, բայց այդ բոլորի հետեւնքը լինում է լոկ այն, որ նոքա զեղեցիկ, զղացված խօսքերով արտայայտուած են իրանց մտքերը հասարակ խոսակցութեան, կան հանգիստաւոր ծառայողութիւնների ժամանակ, Ամեն բան մտածել, ցանկանալ և ուշիւ չը կատարել, — ահա նրանց

կերպով շինված առարկայ, այն է մի անդլիական մարդ, պտուտակով: Այդ սուտարկները պատրաստող աշակերտները բոլորն էլ հայեր են: Ինչպէս յայտնի է, դպրոցի տեսուչը Բալթիկայէ Պատկանեան է: Ուրախութեամբ ստանալով այդ սուտարկները, շնորհակալութիւն ենք ցանկանում հայ երիտասարդ սպառաջ արհեստաւորներին: Մեր աշխատակիցներից մին խոստացաւ մեզ աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել Նոր-Նալիկանի արհեստաւորաց դպրոցի մասին:

Կովկասում պանդոգործութիւնը զարգացնելու և կանոնաւորելու նպատակով Պետերբուրգում, Ինչպէս հաղորդում են այնտեղի լրագիրները, կազմվում է մի առանձին ընկերութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպական քաղաքական դրութեան այժմեան կազմակերպութիւնը, մի քանի երկիրների յարաբերութեան այժմեան վիճակը այժմեան մեծ երկիւղներ է պատճառում, որ բացի վիճակական ահազին օրինապէսներից, և ահազին գործ պահելուց, մի քանի պետութիւններ ձեռնարկել են աշխարհագործների, որոնց պլանսոր նշանակութիւնը այնքան էլ առնարկական, արդիւնաբերական չէ, որքան պատերազմական և ռազմագիտական: Արդէն յայտնի է, որ Գերմանիան ձեռնարկեց այն ահազին ջրանցքի շինութեանը, որը պէտք է միացնի Հիւսիսային ծովը Բալթիան ծովի հետ: Ինչպէս երևում է ջրանցքի յատկապէս մանրամասնութիւններից, այդ ձեռնարկութիւնը բաւական մեծ չափով պէտք է առաջ դնայ. այդ ջրանցքը միջով կարող կը լինի արձակ կերպով անց ուղարձ անել զերմանական նաւատորմը, իր ձեռքում պահելով այդ երկու ծովերի տիրապետութեան բանալին: Գերմանական կառավարութեան այդ հիմնական նախապատրաստութիւնները, ի հարկէ, չէին կարող ազդեցութիւն չանել Ֆրանսիայի վրա, որը հակառակորդի ուժերը միշտ պէտք է կշռադատէ, և հէնց այդ պատճառով ենք ներքոյ, ներկայումս ֆրանսիական հասարակական աշխատանքների միջնորդութեան մէջ առանձին ուշադրութիւն է պահել այն ջրանցքի հարցը, որը պէտք է միացնի Ատլանտիան ովկիանոսը: Միջերկրական ծովի հետ և որի շինութեան միտքը վաղուց արդէն ծագել է: Ֆրանսիական նաւատորմը մի ամբողջութիւն չէ կարող կարգիլ պատերազմի ժամանակ, եթէ չունենայ իր սեփական իշխանութեան ներքոյ գտնվող մի ջրանցք յիշեալ երկու ջրերի մէջ: Եթէ պատերազմ

իսկական արժանաւորութիւնը: Այս տեսակ դաստիարակութեան, էժանազին ֆրանսիայից մեր երկրորդագործներն հետո պահելու համար անհրաժեշտ է փորը հասակից նրանց դաստիարակութիւնը տանել բնական ուղղութեամբ, զարգացնել ոչ միայն նրանց ուղեղը և մտաւոր ընդունակութիւնները, այլ բոլոր թէ հոգեկան և թէ ֆիզիկական ուժերը: Բնական դաստիարակութեան ամենագեղեցիկ օրինակ կարող է ծառայել գիւղական դաստիարակութիւնը: Գիւղացի մանուկը իր մօր կաթի հետ ծծում է՝ գործնականութեան ոգին: Նրա ծնողները, անգիտակցաբար, միայն կարելիք դրված փորը հասակից կապում են երեխային բնութեան հետ և սովորում են նրան սովորել, ճանաչել բնութիւնը, աշխատել, հարուստանալ նրա ուժերը: Այժմ, ասում տարեկան երեխային հայրը տանում է իր հետ անտառ փայտ կտրելու, հարկադրում է նրան մանակցել իր դաշտային գործերի մէջ, երկրագործական պարագայում ամեն տեսակ փորձութեանց ու վրէժնաւորութեան մէջ: Այստեղ նա ենթարկվում է թէ ջրային և թէ քաղցածութեան, սովորում է տանիք ծանր աշխատանքի յղմանութիւնը, սովորում է առանց վախճանաւոր, կուռ ընտելման ուժերի հետ, գիշեր թէ ցերեկ, դաշտում թէ անտառում, տաք արեգակի ճառագայթների տակ, թէ ցուրտ ջրում և անձրևի ներգործութեան ենթարկված: Այս ամենը շատ հասարակ, ամենօրեայ բաներ են փորձելի գիւղացու համար: Շարունակ գտնվելով բնութեան ազդեցութեան տակ, նրա թէ հոգեկան և թէ մարմնի ուժերը ամբողջով աշխատում են երկաթ և այդպիսի մարդը, իր երկաթի

մական մի տաքանալի ժամանակ՝ զիցուք Անդլիան փակել Ջիբրալտարի նեղուցը, այն ժամանակ ֆրանսիական նաւատորմը ջլատված կը լինի, որովհետեւ Միջերկրական ծովի մէջ կանգնած նաւատորմը այդպիսով կը զրկվի որ և է ուղիղ յարաբերութիւնից: Այդպիսի վտանգ Ֆրանսիայի ներքին փակեղուց կարող է առաջ գալ Ֆրանսիայի համար ոչ թէ միայն Անդլիայի կողմից, այլ և Իտալիայի կողմից, որը միշտ կարող է կտրել Ֆրանսիայի և Ալժիրի յարաբերութիւնը, եթէ տեսնի, որ Միջերկրական ծովի մէջ եղող ֆրանսիական նաւատորմը զրկված է մեծ պաշտպանութիւնից: Այդպիսի ովկիանոսի կողմից: Ֆրանսիայի ներքինից ազատվելու համար, Ֆրանսիան մտադիր է նոր ջրանցք անցկացնել՝ կտրելով Լանդէզիլի պարանոցը: Նոր ջրանցքը ահազին ծախքեր կը պահանջի, և ինչպէս երևում է ծախքի մօտաւոր հաշիւներից, այդ ծախքը կը հասնի մօտաւորապէս 1/2 միլիարդ: Այդ հարցը արդէն շատ անգամ ընկել է դաշագոյն մասնագիտական ժողովներում: Դեռ 1882 թիւն էլ կառավարութիւնը կազմեց 44 հոգուց բաղկացած մի յանձնաժողով այդ ջրանցքի հարցի մշակութեան համար, և այդ համադրութեան յայտնեց, որ ջրանցքի միջոց իրագործելի է: Զրանցքի շինութեան հարցը՝ պատերազմական և քաղաքական կազմաւորների ազդեցութեան ներքոյ օրից օր ժողովրդականութիւն է ստանում ֆրանսիական ազգի մէջ, և համոզված են, որ դրո՞րի ձեռնարկութիւնը շուտով տեղի կունենայ:

ՆԱՍՄԱԿ ԹԻՒՐԻՍՆԵՐ

Կ. Պօլիս, 16 յունիսի «Արեւել» արտատպեց նկարագիրներն այն հանդէսներու, որը կատարուած էին ի Թիֆլիս պ. Չմէլեանի յօդուանի առթիւ Միւր խեղձ խելապատաններու մէջ չէր կարող մուտք գտնել այն մտածութիւնն թէ՛ դերասանը մը կարենայ այդքան հզոր տպաւորութիւն թողուլ ժողովուրդի վրայ: «Մասիս» օգուտ կը քաղէր այդ առիթէն քաղաքացիներն մը դնելու ռուսահայոց և թրքահայոց դրամատիկեան միջև և «Մասիս» մէջ կը հրատարակուէր հետեւեանքին: «Միջ մէջ կը զրկենք ռուսահայոց Երուսաղէմի և ներքին կանոնադրի վէճերու լուրերը, Թիֆլիսի թերթերը մեզ անդադար արձագանքներ կը բերեն զրական տօնախմբութեանց: Յորեկան բանաստեղծի, յօդուանի դերասանի, յօդուանի ուսուցչի, յօդուանի խմբագրի, յօդուանի վիպասանի: Ժողովուրդ մը, որ կը զարգանայ, որոյ սիրտը կը զբաղ, բոլոր հոգին կը բարձրանայ, այդպիսի ժողովուրդը միայն կրնայ կատարել այդպիսի հանդէսներ: Մենք կարող չենք ըմբռնել այդ

բնատրութեամբ և ոյժով, միայն կարող է մրցել զոյգութեան կուռի ասպարիզում: Նա չէ վախճանում ոչ ցրտից և ոչ քաղցածութիւնից, ոչ անտառի զաւառից և ոչ մարդկանց սպառնալիքներից: Ինչպիսի օրոքումը արարածներ են նրա մօտ քաղաքացի վախճան և հպարտ պատանիները: Նրանք հպարտանում են իրանց հաղուստով, զիւրաւորութիւն, իրանց քաղաքացիական ջնքին տոկութիւններով և ծիծաղում են դիւղայի երեխայի վրա, որ նա չը դիտէ պատառաքանքով հաց ուտել, չէ ճանաչում փողի թուանշանը, չէ կարողանում զանազան թափալ լիւսաւոր, հասարակ մեծադիւ թանգարանի սովոր և արժանիք... Բայց իրանք, այդ փառասելի և ինքնահաւան փորձերի աղաները, վախճանում են գիշերով տանից դուրս դալ, անտառի և դաշտի մասին պարագիտ անգամ չունեն, փախչում են աշխատութիւնից և աւելի դիւրաբանում են սուտ խօսքի, զոգանալ, խաբել, քան թէ իրանց սեփական աշխատութեամբ մի բան ձեռք բերել: Նրանք սովոր են փորձ ժամանակից ամեն ինչ պատրաստի ունենալ, սուտանք աշխատելու ուսով, խմել, հոգնել, դուրսանալ: Եւ այս պատճառով ծիծաղում են կեղծ ժողով վրա, որ նա դնում է հօր հետ քաղաք փոքր կամ ամբար վաճառելու և քաղաքից, եթէ հարկ լինի, կրկին մշնակ վերադառնում է գիւղ, սուտանք կատարելու, որ ճանապարհին տաղանքներ կը պատահեն, անտառի մէջ գալի կամ ուրիշ զաւանի կը հանգիստ: Ի հարկէ, գիւղական դաստիարակութիւնը իր այս դրութեամբ ունի թերութիւններ: Եւ եթէ Ռուսոսն այդքան նշանակութիւն է տալիս գիւղին, եթէ նա սկզբնա

հանդէսներու մեծութիւնը: Չը տեսնեք թէ որպիսի աղաւթիւն տրեց, երբ «Արեւել» արտատպեց «Մշակէ» և «Արձագանքէ» սրանքի նկարագիրներն այն հանդէսներու, որը կատարուած էին ի պատիւ պ. Չմէլեանի: Ինչպէս, մի դերասան, որոյ առաջ հիացած կը մնան ամեն դասակարգի հայր: Գայթակցութիւն. Ինչպէս գտնուին հայեր, որը կարծեն թէ աշխարհիս վրայ բիրտ ոյժն և ու է է կերպով զանձուած հարստութիւն: Դուրս յարգանաց ու մեծարանաց արժանի բան մը կը դառնուի: Այլ ևս մնաւ բարով ազգութիւն և եկեղեցի, քանի որ վիպասանը, դերասանը կուզեն համարել ազգի բարեբաւները: Մի մարդ, որ չը կրէր վստիւսաւոր տիրոջը, Ինչպէս զնա ազգի բարեբար անուանել:

Եւ երբ Թիֆլիսի հանդէսներու արձագանքները մեզ կը հասնեն, ուր են մեր դերասանը, մենք այլ ևս հայ թատերական խումբ չունենք. իսկ հին խումբերու բեկորները թափախել կը շրջին և օտար խումբերու մէջ կերպեն օտար երգեր:

Այդ հին խումբերէն յիշատակ մը միայն կենդանի կը մնայ, տիկին Արուսեան: Այնու մը, այդ տիկին Արուսեանի անունն, որ մի քառորդ դար կը կենդանացնէր կարծես, սերտ կապերով կապուած է սահմանադրութեան առաջին տարիներու, սիրոյ, յուսոյ յիշատակներու հետ: Մի քառորդ դար առաջ նորա ոտքերուն առաջ կը խոնարհվէր Պօլսոյ նորածն իրիտասարդութիւնը: Պէշիկթաշեան, Հէրիմեան, Թերզեան կը տեղծէին հայ թատերգութիւնը. Արուսեան էր օրուան հերոսուհին: Եւ զինքը տեսայ մի քանի շաբաթ առաջ, նոյն այն չարաբաստիկ օրն, յորում Աղգային խողովոյ մէջ կատակերգութիւն մը կատարուելով, փորձամասնութիւն մը հակառակ մեծամասնութեան կամոյց, հակառակ ընդհանուր ազգին ջնքով փախադանաց, կը յաջողէր Յարութիւն Պատրիարքն իւր դահլիս վրայ պահել: Աղգ. ժողովոյ սրահէն ելնելով, պահ մը գնացի պատրիարքարան: Այդ, վարը, կոտորած աթոռի մը վրայ ինկած տեսայ Արուսեանը: Գիւղացի մը ունէր ձեռքը և կաղաչէր, որ պատրիարքարանէն չլինել տան դայն, և ոչ իսկ դեղը գնելու ստակ ունի:

Խեղճ կինը կէս-յիւմարի տեղ դրուած է. նիհար, գունատ, զրեթէ հերարձակ, բայց տակաւին տեսակ մը հպարտութիւն—աղօտ փալ հին փառքերու—տակաւին դնա չը թողուր: Յիմար Այլ սաւկան որ խելացի քան զնա աւելի տաղձ դատողութիւններ կատարէր: Ո՞րքան անէղբայրներ, ինչքան դատաստաններ այն գործիչներու մասին, որը այսօր կը դեկաւրան—կամ լաւ ևս կը նենգափարեն ազգն: Եւ քանի, քանի և հինգ տարի առաջ ինչ որ էին նոքա, ինչպէս որ կը նկատուէր զանոնք Արուսեան, այսօր իրենց գործով կարգադրացնեն կէս-յիւմարի դատաստաններն:

կան դատարարակութեան համար խորհուրդ է տալիս զիւրից օրինակ առնել, այստեղ նա աչքի առաջ ունի այն ուղղութիւնը, այն զիւրաւոր սկզբունքը, որի վրա հիմնված է գիւղական դատարարակութիւնը: «Լոկ այն դատարարակութիւնը լաւ է և լոկ այն դատարար կարող են հաստատ կերպով ըմբռնել, որոնք մարդ ստանում է գործնականագիտ և մշակում է իր ներքին, սեփական ոյժերով, ասում է Ռուսոսն: Եւ սրա գործնական իրականացումը մենք տեսնում ենք գիւղական դատարարակութեան մէջ: Հետեւելով այդ ուղղութեանը, դատարարակութեան այդ բնական և անհրաժեշտ եղանակին, կարելի է, շարունակ պարագիտական օրինակներ, փորձեր և դիտողութեանց միջոցով, մարդու մէջ զարգացնել ոչ միայն գիւղացու բոլոր զեղեցիկ յատկութիւնները, այլ և շատ ուրիշ մարդկային ձիրքեր, հասարակական բարձր ինստիտուտներ, բնկերտական ազնիւ, առաքինի հակամեներ, որոնք շատ հարկաւոր են մարդոց ապագայ քաղաքաւորութեան ու երջանկութեան համար:

Գատարարակութեան զիւրաւոր նպատակը հէնց նրանում է կայանում, որ ստեղծէ թէ ֆիզիքայէս, թէ մտաւորական և թէ բարոյապէս կատարելաւ մարդիկ:

Այդպիսի մարդը սենեկում է իր մէջ գիւղացու ֆիզիկական առողջութիւնը, նրա զիւրաւոր և տոկուն համբերողութիւնը, նրա կամքի և բնատրութեան անվրդով հաստատութիւնը—միացած խորը գիտութեան և բարձր մտաւոր զարգացման հետ:

Խեղճ դերասանուհիին պաշտպանը Ներսէս Պատրիարք էր. միշտ խստիւ կը յանդիմանէր այն էֆէնդիներն, որք ժամանակաւ Արուսեակի պաշտօններ, այժմ Լեւոն կը դարձնեն նմա, առանց ո՛ր և է օգնութիւն մը ընելու:

Բայց Էր այժմ հին թատրոնով ու հին դերասանութիւններով զբաղուէլ Ալլ ևս մեր նոր թատրոնը Բերա չէ, այլ փոխադրված է ի Գում-Գաբու. թատերաբեմնէ Ալլի ժողովը, դերասանը ազգային երեսփոխաններն: Բայց որքան կը սիրենք, որքան կը յարգենք իրական թատրոնն ու իրական դերասաններն, այնքան ալ տխուր տպաւորութիւններ ունինք այն կեղծաւորներուն համար, որ ուրիշ մարթերու մէջ մտած զմեզ ի սպանդ կը վարեն:

Բնաւ երբեք Ալլի ժողովն այնքան տխուր, այնքան ողբալի տեսարան մը չէր անձա՞ծ ի հանդէս, որքան այժմ: Նոյն իսկ երբ ունայնափութեան ոգին կը տիրապետէր Ալլի. երեսփոխանաց սրտերու մէջ ժողովն այնքան տարաբաղդ չէր եղած: Այժմ մի ջանք կայ, ցրտացնել ապրիլ Ալլի ժողովն, յուսահատացնել երեսփոխանութիւնը, ամենուն վրայ լքում առաջ բերել և երբ այլ ևս ապրի ու երեսփոխանութիւն յոյժած, յուսահատած, վնասած են, այն ատենն է անս որ պէտք է հարուածել, ջնջել սահմանադրութիւնն ու Ալլի ժողովն, որոյ գոյութիւնն ո՞՞՞ր մը կը համարեն: Այդ գաղափարն, Ալլի ժողովը ջնջելու գաղափարը նոր գոյութիւն չունի, այլ երկար ատենէ ի վեր յայտ կէտ նպատակի կը նկատեն շատերը, բայց այս տարի, փետրվարի 9-ին, Պէշկիմաշի դերեզմանատան խնդրոյն առթիւ հակա-սահմանադրականաց կատարութիւնն իւր գերազանց ծայրահեղութեան հասաւ: Ինչպէս գտնուին եկեղեցականներ, գտնուին երեսփոխաններ, գտնուին հրապարակագիրներ, որք կը մոռնան թէ հարկաւորն և երբ Նորեան էֆէնդի կը գոռայ թէ՛ «կանկ պիտի թափի վրանիդ», եթէ չը հնազանդիք», նոքա կը պատասխանեն թէ՛ ունին Աստուած մը, որ «վերջէ զմեզ ի հնոցէ հրոյն լայրբաբելոյ» և Պատրիարք և Նորեան և բոլոր աւագանին իրենց յուսահատ ջանքերը ջանքախումբ կը տեսնեն Հայրիկի մը, Նոր-Պէշի մը—Աղաքէ-գեանի մը արիւթիւնէն, և երբ կայսրն այնքան խոհական իմաստութեամբ կը յարգէ ազգին փափազն, այդ օրն այլ ևս կերպնուն լռեցնել, սպաննել երեսփոխանութիւնն:

Եւ հարկ է մի առ մի պարզել թէ ինչ միջոցներու կը դիմեն Գում-Գաբուի մեծամասնութիւնն—անս այս է իրանց կէտ նպատակն: Կանոններն ոտքի տակ կ'առնուն, վարպետութիւններ կը նեն: Թոյլ չեն տար որ պակաս երեսփոխանաց թիւը լեցուի. կը յաջողին քսան երկու ձայնով—հակառակ մեծամասնութեան կամաց—պահպանել իրենց Գարութիւն Պատրիարքը—Երեսփոխանը, որ ամառ երբ չորս ժամ պիտի չանեն միայն երթեւեկութեան համար և ժամկետով պիտի դան փայտէ ամբողջութեամբ վրայ ջանջախուրդ, այդ երեսփոխանները կամաց կ'ամաց կը սկսեն երգել և այլ ևս չը գալ:

Եւ այդ բոլոր ծրագրերնեւ յաջողութեան համար պէտք էր ձեռք առնուլ Ալլի ժողովը ատենական և յաջողեցան, ինչպէս միշտ: Մերիէմ-Գուլի Գարութիւն էֆէնդի Ալլի ժողովը ատենական պետ չէ ընտրուած ըստ օրէնի, բայց ըստ կ'աւտարուած իր օրէնի և ան ատենական պետ է: Կուզէք ինչպէս իմանալ: Ան համառօտաբար:

Ալլի ժողովը հրաւիրադրեն կը բաշխուին. խնդիրներու կարգ մը, չարք մը խնդիրներ կան և առկա գործած է Ատենական ընտրութիւնը: Երեսփոխանը կըսեն, այսօր այդ ընտրութիւնը չը կատարուի, կամ չատ ու չը կատարուի, ուստի կը դանդաղեն երթալ: Նորեան և փափաղեան էֆէնդիներ տեսնելով թէ հակառակորդ երեսփոխաններ տակաւին չեն եկած, չուտ մը առաջին խնդիր կընեն ատենական ընտրութիւնը: Քուէարկութիւնը կը սկսի, ո՞վ ապշուցնու: Ատոնց մէջ իսկ Մերիէմ-Գուլի էֆէնդին մեծամասնութիւն չը կրնար գտնել: Նորեան և հինգ երեսփոխանը ներկայ են և միայն տ'ա ս'ն և չ'ս'ր'ս' քուէ կը ստանայ Մերիէմ-Գուլի էֆէնդին: Հակառակ Նորեան և փափաղեան էֆէնդիներու ամենաբարձր կամեցողութեան հնարաւոր չէր այնքան քուէով ատենական մը ընտրել: Եւ մասնակցել, որ ուրիշ տարիներ Մերիէմ-Գուլի էֆէնդի միշտ մի ա ձ ա յ ու թ է ա մ ք ընտրուած է. որպիսի անկուտ:

Հարկ կըլլայ նորէն քուէարկութիւն ընել. դեռ ցողնական ջանքեր կը կատարուին և բարեմիտ երեսփոխաններէ ութը քուէ կ'ընեն կորույ: Այս անգամ մեծ ջանքերէ յետոյ Մերիէմ-Գուլի էֆէնդի քսան երկու քուէ կ'առնու: Բաւական է: Ոչ Մերիէմ ցարդ չէ եղած ատենական մը, որ քսան և չորս քուէէն պակաս առած լինի: Օրինաց ամենէն նուազ թիւն այս է: Ալ համեմատութիւն կը վերջանայ, օրինաւոր թէ ապօրինաւոր չեն նայեր: Մերիէմ-Գուլի էֆէնդին կը բաղմեցնեն ամբողջ կատարուած գործողութիւն մը fait accompli միշտ լինի, որ պիտի կարենայ ձեռք հալել այդ ամբողջութիւնը:

Ինչ դիտարկութիւններ ունեն Նորեան և փափաղեան էֆէնդիներ, ինչ պիտի գործեն, հարկաւոր յանգի: Մերիէմ-Գուլի էֆէնդին, որ բաւական հեռատես մարդ մ'է, պիտի շարունակէ գործիք մը լինել անոնց արեւուն մէջ, թէ ընթացքը պիտի փոխէ: Ան խնդիրներ, որք կը յաջուին և որոց մասին կրնա՞մ գրել յաջորդ համակուրիչպէս նաև «Մարտ» շաբաթաթերթի մասին, որոյ խմբագրութիւնը փոխվեցաւ:

Եւ չը մոռնանք ըսել թէ մինչ այս մինչ այն Հայաստանը, նորա վիճակը բոլորովին մոռացութեան կ'ուռնանք, այս ալ ծրագրին մէջ է: Պոլսի գտնուող աւագանաց բարեկամ մը հետեւեալ լինձ պատմեց: Մաքսատան կողմէրը կը գտնուի եղեր երկու օր առաջ. երկու մէկեր աղաք կուգան, մին տասն և չորս տարեկան, միւսը քիչ աւելի մեծ, նոր եկած են Պոլս. մեր բարեկամը կը հարցնէ թէ ինչ պատճառաւ եկած են: Ինչ ընենք, աղքատ ենք, կը շարաւարկենք, միւր կը թաղեն, կը սպաննեն: Բոլոր դիւղերէն այլ ևս փախչող փախչողի են, կը պատասխանեն խեղճներ: —Բայց այդ բաները միշտ կըլլային, համբերելու էք. ամեն ինչ կարգի պիտի մտնէ: —Այլապէս պիտի մտնէ, կը պատասխանէ մէկ ցինքէ մին, առաջ յոյս ունենք, ինչ որ ընենք մեզ Պոլս կը գրենք. Հայրիկ Պատրիարք էր, Ներսէս Պատրիարք էր. անոնք կ'աշխատէին. իսկ հիմա, ամեն կողմէ կ'ըսեն միւր որ Պատրիարքին գրութիւնը չը պիտի ցաւենք. որին վրայ յոյսերնին դնենք:

Այո, յուսահատութիւնը կը սկսի պատել ամբողջ Հայաստանը. խեղճ ժողովուրդ բոլոր դժբաղդութեանց մէջ յոյս մը ունէր, հաւատք մը ունէր: Պէտք է սրտին իւրել այդ յոյսը, պէտք է ջնջել, սպաննել այդ հաւատքը:

Հայկակ

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

—Էնչպիսիքի դատարանում դատաւարութեան էլ զատ-թաղարկողներին մասին Բերիէմ-Ֆրանսիական դեսպան Հերբետտ տեսակցութիւն ունեցաւ. իշխան Բիսմարկի հետ, առաջարկելով նրան թեթեւացնել միջադրութիւնը պատիժը: Իշխան Բիսմարկ թէ ևս սկզբում հաւանութիւն տուեց, բայց մի քանի օրից յետոյ յայտնեց, որ այդ անկարելի է, ի նկատի ունենալով Ֆրանսիական մամուլը: Դէպի Գերմանիան բռնած վերքը:

—Անգլիական «Daily News» լրագրը սաստիկ յարձակում է անգլիական կառավարութեան վրայ եղբայրական նոր դաշնագրի առիթով: Լրագրը անտոմութիւն է համարում որ և ինչ ժամանակամիջոց որչա՞նք՝ անգլիական զորքերի Եգիպտոսից հեռանալու վերաբերութեամբ:

—Չերսօբորիայի սահմանների վրա թուրք և չերսօբորիայի ազգաբնակչութեան մէջ շարունակուում են տեղի ունենալ խառնակութիւններ և թշնամական ցոյցեր: Այդ պատճառով Չերսօբորիայի կառավարութիւնը մի յայտադիր ուղարկեց Բ. Գրանը:

—Բաւարիայի սէյմի ընտրութիւնները վերջացան. թէ կղերական և թէ ազատական կուսակցութիւններն էլ կ'ունենան բաւական ձայներ սէյմի մէջ:

—Ինչպէս երևում է վերջին տեղեկութիւններից Սերբիայում՝ Բիստրից գլխավորութեամբ մի-նիստարութիւն կազմակերպ համար ամենից շատ աշխատել է գերմանական դեսպանը: Այդ բանին վիեննայում մի առանձին նշանակութիւն են տալիս:

—Ներքին պետերի համար փոխառութիւն առնելու հարցը այնքան կարևորութիւն է ստացել, որ ինչպէս երևում է, բոլորակապ խնամակալութիւնը այդ մասին առաջարկութիւն կանի ազգային ժողովին:

—Պոլսից հաղորդում են, որ թիւրքաց միւսիստներին շատերը Անգլիայի կողմն են եղել պատահական դաշնագրի հարցում, և այդ պատճառով շատ իրողութիւններ սխալ և փոփոխած կերպով են տեղեկացնում սուլթանին: Այդ բոլորը ի նը-կատ Մոնթենէլլո չատ է աշխատում անձամբ տեսնել սուլթանին հետ, և հաղորդելով իր կառավարութեան կարծիքները եղբայրական գործի վերաբերութեամբ՝ հաղորդել դրա հետ միասին թիւրքաց միւսիստներից մի քանիսի իսկական աւարքները:

—Իրանական դատաւարանային օրինադրի երբորը ընկերացնողութիւնը արդէն տեղի է ունենում Լոնդոնի համալսարանի ժողովում: Ընդդիմադրական կուսակցութիւնը վճռել է իր բոլոր ոյժը կենսօրոնացնել հողային օրինադրի վրա, որի քննարկութիւնը շուտով կը սկսվի:

—Վիեննայից հեռագրում են, որ Սօֆիայից ստացած տեղեկութիւններին նայելով, այնտեղ տրամադրութիւն կայ սերբիացոց Միլան թագաւորին ընտրել Սօֆիայի գահի իշխան, եթէ Բատտենբերգի և Կոբուրգի թեկնածուութիւնը չը յաջուի:

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս վախճանվել է Գերմանիայի Տիւրին-գրեն նահանգի Արնշտադ քաղաքում, 63 տարեկան հասակում հուշակալոր դերասանուհի վրայագրող տիկին Իոն, որ ստորագրում էր իր բանասերը Եւգենիա Մարի և տ'ու կըրձ տեսնուով: Փաշը հասակում Մարիտա ունէր գեղեցիկ ձայն և ուղղում էր իրան նուրբեր երգեցողութեան, բայց այնուհետեւ գրեթէ կատարելապէս կորցնելով լսողութիւնը, նա նուրբեր իրան գրական ասպարէզին: Բայց հոլանդացիներ օգնութեամբ իր ուսումը աւարտելուց յետոյ, նա սկսեց ձայնապարհորդութիւններ անել Եւրոպայում, հետզհետեւ ծանօթութիւններ կապելով եւրոպական ամեն երկրների բարձր շրջանների հետ: Նրա բանասերի նիւթերի մեծ մասը վերցրած են հասարակութեան բարձր շրջանի կենսակերպ: Նրա բանասերը աշագին աղմուկ էին հանում Գերմանիայում, սաստիկ կարգաւորում էին և անմիջապէս լսարաններում էին օտար լեզուներով: Մարիտայի գլխավոր բանասերը սրանք են: «Ոսկեայ Էլզա», «Վիգելա խիստուհի», «Սերիտիստները և զմեզ կ'ըսեն», «Մի պառաւ աղջկայ գաղտնիքը», «Երկրորդ կին» և շատ ուրիշներ: Սկզբից նրա վեպերը տպուկ էին «Gartenlaube» գերմանական ամսագրում, այնուհետեւ առանձին գրքերով և Մարիտայի գրքածանների պատճառով յիշուլ ամսագրեր բաժանորդների ահագին քանակութիւնն ստացաւ: Գերմանական գրողներից շատ քիչերը այնքան մեծ վարձատրութիւն էին ստանում իրանց գրուածների համար, որքան տիկին Մարիտա: Նա իր գրուածների համար ստացած փողերից մի շատ խոշոր կ'ապօրոգիւնէր գիւղացի իր համար: Իր բանասերից մէկը ծախելով, նա այնքան մեծ գումար ստացաւ որ այդ բանին փողով վճռել էր իր համար մի գեղեցիկ կայտաւոր անուն՝ Տիւրին-գրեն նահանգում, բայց մնալ վրա հասնելով, արդէն չէր եղել նրա այդ դիտարկութեանը:

Ստատիստիկական տեղեկութիւններից երևում է, որ եւրոպական քաղաքների մէջ ամենից քիչ մարդ մեռնում է ծերութեամբ, որտեղ մեռնողները հազիւ հասնում են 17-ի հազար քանակիցների վերա, որանից յետոյ գալիս է Եգիպտոսը՝ 18 հազի հազարի վրա, և ապա Թարիքը՝ 21 հազի հազարի վրա: Ամենից շատ մեռնողների տոկոս տալիս է Բերլինը, որտեղ մեռնում են 35 հազի հազարի վրա, և Պետերբուրգը, որտեղ այդ թիւը հասնում է 117-ի՝ հազարի վրա:

Հետզհետեւ սովորութիւն է մտնում պատուաստել մարդկանց ալ և ալ վարակել հրատուութիւնների թոյնը, ինչպէս որ ծաղիկ են պատուաստում: Այժմ Բիո-Ջանկոյում, Ամերիկայում, Ֆրէն և Ժերար բոլորիցս փորձ են փորձում պատուաստել մարդկանց դեղին տ'ու զին թոյնի վրա: Ըստ 1885 թվ. ընթացքով Բիո-Ջանկոյում դեղին տեղիւն չիւստիւցածներէրը նրանք, որոնց առաջուց պատուաստած չէր մի-նչպէ հիւանդութեան թոյնը, աւելի մեծ թուով մեռան քան թէ նրանք, որոնց պատուաստուած էր թոյնը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՂԵՍԱ, 24 յունիսի: «Երկիր» շրջանավոր երէկ այստեղ հասած սերբիական թագուհին և իր որդին, ընդունվեցան մեծ յարգանքով և ժողովրդի մեծ ողբորովեամբ: Հէնց որ նաւակը մօտեցաւ, նաւաւաւորներն, անմիջապէս շողեցան մոտն պաշտօնական անձինք, որոնք սպասում էին թա-

ղուհու գալու: Քաղաքապետի օգնականը ընծայեց թագուհուն ծաղիկայ մի փունջ, սլավոնական ընկերութեան նախագահը ողջունեց նրան մի ճառ արտասանելով, որի մէջ շնորհակալութիւն յայտնեց նրան ընկերութեան պատուաւոր անդամի կոչումը ընդունելու համար: Շոգենաւից մինչև հիւանդը ժողովրդի մեծ բազմութիւն ողջունում էր թագուհուն «ուրայի» աղաղակներով, իսկ ղեկավարական օրէկստըրը անում էր սերբիական հիններ:

ՍՕՖԻԱ, 24 յունիսի: Մեծ ազգային ժողովի բացմանը, յունիսի 22-ին, ներկայ էին 474 պատգամաւորներ: Ժողովի նախագահ ընտրված է Տոնչիկ, փոխ-նախագահ՝ Վիտաշեւի: Երէկայ նիստը նշանաւոր չէր, դեռ ևս ոչինչ նշանաւոր հաղորդութիւն արած չէ խնամակալութիւնը: Հետեւեալ նիստը լինելու է հինգշաբթի:

ԼՕՆԻՕՆ, 24 յունիսի: Սպիրիտի յայտնեց լորդերի պալատում, որ անդր-թիւրքաց դաշնագրի դեռ ևս վաւերացրած չէ, բայց և նրան վաւերացնելու միջոցով նշանակաւ եղած չէ: Գրուածագ-վ օլֆ բրիտանական լիազօրին հրամայած է դուրս գալ Կ. Պոլսից մի չափավայ յիշապարտութիւն: Այդ հաղորդութիւնը լրացրել է համայնքների ժողովում արտաքին գործերի մինիստրի օգնականը, յայտնելով որ Անգլիան միջեկու չէ վաւերացրած թիւրքայի կողմից, եթէ նա տեղի է ունենալու Գրուածագ-վ օլֆի գնալուց առաջ: Բայց աւելի երկար յետաձգութեամբ Անգլիան չի համաձայնի:

ՓԱՐԻՉ, 24 յունիսի: Պատգամաւորների ժողովը, շարունակելով ընեն զինուորական սրահինական օրէնքը, ընդունեց այն յօդուածը, որով գործնական զինուորական ծառայութեան ժամանակաւիցը որոշվում է 3 տարին, փոխանակ այժմեան 5 տարեկան ժամանակամիջոցի: Բուլիէի կազմված բիւրոքրատի խնայողութիւնները, համաձայն անհեղաւարտ կազմակերպութեանը, հետ, որոշված են 129 միլիոն ֆրանկ գումարի: Լուր կայ որ մինչև յուլիսի 30 ենթադրում են աւելացնել մարքասարկը օտարերկրեայ սպիրտի վրա՝ 30 ֆրանկից մինչև 70 ֆրանկ իւրաքանչիւր սկիտօյից:

ՊԵՏ, 24 յունիսի: Լիթւենում, հեծելազորքի վարժութեան ժամանակ զինամիտի մի ուսմի պայթիւն առաջացաւ, որից զինուորներից 8 հոգի սպանվեցան, իսկ 40 հոգի վիրավորվեցան, որոնցից 27 հոգի ծանր վնասներ ստացան: Լիթւենի, 24 յունիսի: Վուդ քաղաքը, իր արւարձանի հետ միասին երկի երկայնակ քանդվեցաւ. 17 տուն բոլորովին քանդվեցան և 30 մարդ ոչնչացան. փոստից է սպառնում էլի 30 տանը ջուրերը վրա գտնվող բոլոր աները բնակիչները, այլ և կառավարչական շինութիւնների մէջ եղողները դուրս փախան իրանց քանակաւորներէր:

ԲԵՐԼԻՆ, 24 յունիսի: «Vossische Zeitung» լրագրին հեռագրում են Լոնդոնից, որ Տիւրին-գրեն հեռագրի է ստացված Ալեքսանդր Բատտենբերգից, որը նորից հրաժարվում է բոլորական գահի համար ընտրվելուց, պատճառ բռնելով ինչպէս իր քաղաքական առողջութիւնը, այնպէս և քաղաքական պատճառները: Հեռագիրը գրված է շատ կարակաւ ձևով:

ՍՕՖԻԱ, 25 յունիսի: Սպիրիտ-Կորուրդի իշխանի բոլորական գահի համար ընտրվելը անկասկածելի է երևում: ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Բիստիկ ենթադրում է վերահաստատել բարեկամական յարաբերութեանը Չերսօբորիայի հետ, երկու պետութիւնների ընդհանուր շահերի համամաս, որոնց յարաբերութեանը անուանարկ են եղել Մերիէմ-Գուլի վերջին միւնիստրութեան ժամանակ:

ՍԽՂԱ, 25 յունիսի: Ապանական զլխաւոր հրամանատար, Հոլանդիայից, յունիսի 12-ին գտնվում էր Խառաղեւում, իսկ զիլգայների գլխաւոր ոյժերը—այդ տեղից դէպի հարաւ Յունիսի 13-ին Հերատից կանգնաւր եկան երկու զունդ հեռակա զորք և մի գունդ հեծելազորք:

ՏԻՐԻՍՊՈ, 25 յունիսի: Այսօր մեծ ազգային ժողովը Բոլորական իշխանացու ընտրեց Ֆերլինանդ Սպիրիտ-Կորուրդեան իշխանին: Նախընթաց օրը ժողովի գաղտնի նիստում հաղորդված էր որ իշխան Բատտենբերգ վերջնականապէս հրաժարվում է Բոլորական վերադառնալուց:

ՕՂԵՍԱ, 26 յունիսի: Սերբիական թագուհին քաղաքապետին յանձնեց 500 լուրի յօդուած վերջին վնասվածներին:

ՍՕՖԻԱ, 26 յունիսի: Ազգային մեծ ժողովի նախագահը Կորուրդեան իշխանին ժողովի կողմից մի հեռագիր ուղարկեց, որով շնորհաւորում է նրա ընտրութիւնը, որ կատարվել է միաձայն և այն համաձայնեց յայտնում, որ իշխանը իր կեանքը կը նուրբ Բոլորական թագուրութեան և մեծութեան համար: Այստեղ ամենք հաւատացած են, որ Կորուրդեան իշխանը կընդունի իրան առաջարկած թագը, թիւն յայտնի չէ այժմ և ի՞նչ կը դայ Բոլորական, մի կը նախապատուէ այնպիսի նախապէս եւրոպական պալատները, առաջին դէպքում ժողովը դուրսված կը մնայ երդում ստու համար, իսկ վերջին դէպքում ժողովը կարձակվի մինչև նոր իշխանի գալուստը:

Կ. ՊՕԼԻՍ, 26 յունիսի: Անգլիական լիազօր Գրուածագ-վ օլֆ յայտնեց մեծ վիզլին, որ եթէ մինչև յունիսի 28-ը Երկրտոսին վերաբերեալ դաշնագրեր վաւերացրած չը լինի, այն ժամանակ նա կը հեռանայ Կ. Պոլսից:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԹՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆԵՐՆՈՑ

(Կուկիա, վարձարձի արձանի հանդէս)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—10—11 Ժ. վերաբուժական, վերականգնող և ատամի ց.

ԿԻՆ-ԲԺԻԶԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—9—10 Ժ. կանանց և երեխայոց ց.

ՐՈՒԳԱՌՎԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲԺԻԶԻ ԿՈՐՈՆԱ—11—12 Ժ. կանանց և երեխայոց ց.

Ա. ԳՈՒՐԿՈ—12¹/₂—1¹/₂ Ժ. աչքի և ներքին ց.

ՁԱՅԵՎԱԿԻ—12—1 Ժ. ջրային ց. և էլէկտրականութեամբ:

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 Ժ.

Հիւանդանոցում է մահ կարճ ժամանակով Մ. Օ. Ղեբ:

Վճար—50 կ: Համախորհրդի (հոսիլիումի) համար համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHEHIAantz

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՏԻ առևտրական գրասենյակը լինելով ՄԻԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆարքիւններին հետ, կրնա յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի միացորդը, բուրդ, բամբակ, ցորենիղէն, նաւթ և ընդհանրապէս՝ Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Ներքապում Գանձարարութեամբ կրնա յանձնարարել զարձեւ առնել Ներքապի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայմաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար զրկյ այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МІЛАНЪ (Италія).

Վարդիկավա քաղաքի միդասեան եկեղեցական երկսու դպրոցները հոգաբարձութիւնը, կամեում է արական դպրոցի համար մի ուսուցիչ, որ պէտք է դաս տայ հայոց լեզու, թուաբանութիւն և երկեցողութիւն, համաձայն ծրագրի: Ցանկացողները փութապէս իրանց պայմանները կարող են առաջարկել նոյն հոգաբարձութեան:

Հոգաբարձուք՝ Յ. Տերտերեան, Գ. Թաթուղեանց:

2—4

ԾԻՍԼԻՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

ՐՈՍՏՈՎԻ (Գօնի վրա) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԱՅՐՆԵՐԻ

Մագազինը Գօրծովայա փողոցում, Վալարաբով փողոցում, Թիֆլիսում, պատիւ ունի յայտնելու պ. պ. ԾԻՍԼԻՈՑԻՆ և ՎԱՍԻՍԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թի մինչ քաղաքի ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ ԾԻՍԼԻՈՑԻ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ առան տեսակները մեր գործարանից բերված: Մեր ԾԻՍԼԻՈՑԻ իր առանձին յատկութիւնները համար, լաւ համ, մեղմութիւն և դուրեկան արօժատ, վալարում է երկարամտայ հոգակ և մեծ տարածութիւն իւրաքանչիւր կայրութեան և արտաաւանանի շատ քաղաքներում:

Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆարքիւնայի ծխախոտի արդիւնները մինչև այժմ յայտնի չէին, այլ պատճառով մինչ քաղաքի ծխախոտի մագազինը, ցանկանալով այլ մեր արդիւնները երկրի մէջ մտցնել:

Խոնարհ արար խնդրում ենք պ. պ. ծխողներին և վաճառականներին անտես չառնել ծանօթանալու մեր ֆիրմայի արդիւններին հետ:

Օտարաբաղադրանքները պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փօտի ծախսը մագազինի վրա է: Պրէյսկուրանները ցանկացողներին անվարձ են ուղարկվում:

Պ. Պ. ՎԱՍԻՍԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՒՄ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԶԻՋՈՒՄ:

ԱՍԼԱՆԻԴԻ Եղայրներ

17—25



Գ. ԿԵՐԵՐԻ

ԵՐԱՇՏԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հերոֆոնների ֆարքիւնայի միակ ազնւոյ մօտ, Կովկասում, Միլայեան փողոցում, № 84, ստացված են մեծ քանակութեամբ:

ՀԵՐՈՓՈՆՆԵՐ

կատարելագործված, դուրեկան ձայնով, նոյնպէս լաւ ընտրութիւն նոյնաների Հերոֆոնի համար: Օտարաբաղադրանքները պահանջները ճշգրտութեամբ և անաչխ փոստով են կատարվում: Նոյնաների կատարողները թէ Հերոֆոնների և թէ Արիստոնների համար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:

18—20

ԼՈՅՍ ՏԵՍՏԻ

ԲԱՅՅԻԻ

ԿԱՅԵՐԻ

ԵՐԿՐՈՐԿ ՀԱՏՈՐԸ

Գինն է 2 րուբլի 50 կօպ.

Հանապարհի ծախսը հեղինակի վրա է: Գրքը բաղկացած է 722 մեծատիպ երեսներից: Վաճառվում է թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ: Բաժանորդները կանխապէս պէտք է յայտնեն իրանց հասցեն, եթէ տեղափոխվել են իրանց նախկին տեղից:

1—10

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ

Александръ Самойловичъ

ФРЕНКЕЛЬ

переѣхалъ въ КУКИ, близъ памятника Воронцова, Мостовая ул. д. Маккера. Երբեք ալ հաւատարմատար Ալեքսանդր Սամոյլովիչ Ֆրէնկել տեղափոխվեց Կուկի, վարձարձի արձանից ոչ հեռու, Մոսովայա փողոց, տուն Մակկերի:

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, յուլիսի 8-ին, ՄԵՐՈՐ (MEURTHE) շոգենաւը, նաւապետ ՍԵՐԵՆՈՆ (SERENON) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան զործակալներին, Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժուների գաղութում, № 103.

2—4

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբորատորնայա փողոց, № 11)

Ցանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար, այն յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԶԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Ընդունելութիւնները սկսվելու են օգոստոսի 25-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովանովների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրանքը դիմում են Թիֆլիս, Կուրսերի Կ. Ս. Մանուէլեանց.

4—5 (Ե. Շ.)

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՑ (GIRONDE)



Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատ-

րաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւն

նը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի

մէջ, պահպանում է ատամները փչանալուց,

սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամ-

ները, մաքրում է և պահպանում է ծնոտը:

Գինը դորակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատտա՝ արկղիկը 2 ֆրանկ:

Հիմնարկութիւնը դրուելու ունի 1804 թից.

Գլխաւոր ազնւոյ SEGUIN, Բորդօ (Ֆրանսիա).

Թիֆլիսում ծախվում է պ. Բերրոմենի մագազինում և պարֆումերների ուրիշ մագազիններում: ՎԼԱԿԵԱԿԱՍՈՒՄ. Ե. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիլի մօտ:

35—48

Բանալով ՇՈՒՇԵՆՈՒՄ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ԵՒ ԿԱԶՄԱՐԱՐԱՆՈՑ և ստանձնելով Շուշու հայոց հոգեւոր տեսչութեան ՏՊԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՈՆԸ, ընդունում ենք ամեն տեսակ գրքեր և կօմիտիայով վաճառել, նոյնպէս և յանձն ենք առնում տպարանական պատուէրներ՝ ամենալաւ զինով:

Մեր հասցեն: Шуша, въ книжный и переплетный магазинъ Бр. Дадиянъ.

3—5 Հ. Շ.